

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՍՈՐԳԻՍ ԲԻՅԻՑ ՄԻՋՈՍԵՆՍԵՆ ՍԻՐԻՍԻՆՍԵՆ

Հնդկաստանցի հայ բժիշկներուն անդրա-
նիկներէն, Սարգիս Միքայէլեան շիրիսեանց
զարգացած է այն ասոն՝ երբ Վալիաթայի
Հայերն Եպիմեդեան խոր քունէ մը պահ մը
սթափելով՝ կը հիմնէին «Աբու-դեռ», ազգո-
գուտ ընկերութիւնը,¹ եւ Մերովը Թաղիա-
գեանցի քաղցրաւոր քնարը գրգռելով կը
հրատարակէին՝ Աշու-եղ պատուական թերթը։²

Մերովը Թաղիադեանցի սիրական բա-
րեկամն եւ բժիշկը,³ որ շատ անգամ արդէն
նիւթ եղած է անոր անմահ գրչին, Սարգիս
բժիշկս համարելի է Վալիաթայի հայ հաս-
րակութեան այն երեսիկի անդամներէն, որը
դարուս կէսին անբուն ներուեցան հնդկահայ
գաղթականութեան անկեալ փառքը վերա-
ստեղծելու։

Աւետուականներու, Եօրդանեաններու,
Զօրաբաններու, Աւաթեաններու գործակից,
Սարգիս շիրիսեանց եղած է քաղաքուստ
բժիշկ մը ոչ միայն իւր ազգէն սիրուած, այլ
եւ մեծապէս գնահատուած Անգղիական մեծա-
զօր տերութենէն, ինչպէս կ'աւանդեն Թաղիա-
գեանցի Աշու-եղները։

Արդէն իսկ աշխարհէ հրաժարած կը հա-
մարէր զայն ես, երբ աւետիս հասաւ Հնդկաս-
տանէն, թէ շիրիսեանց բժիշկող՝ էգեա, առողջ,
թեւեւ դադրած բժշկական գործունէութենէ։

Մեծ եղաւ գահաւանդութիւնս, անձաւ՝
բերկրութիւնս, երբ այս լուրն առնելէս քիչ
քաժանկէ վերջն ալ, շնորհիւ Գ. Ս. Հայկազունի
կալիաթարնակ բարեխմբիս, բախտ ունեցայ
թիվակցիլ Զօրթի. շիրիսեանցի հետ, եւ
ընդունիլ իրմէ ինքնագիր նամակները։

Ժամանակակից Պոմպայեցի Եօլսէփ Մար-
կոսեան մահաւոր Եօլսէփեանց համբաւաւոր
բժիշկին, տարւով մը միայն փոքր անկէ, Գ.
Սարգիս Միքայէլեան շիրիսեանց ծնած է
1827 թուականին, Վալիաթայի մօտ Չիւքա՝
կոչուած տեղը։

Սերունդ Զօրայեցի հայ վաճառականի
մը, անշուշտ Գրիգոր անուն, որ աղաւաղուելով
եղած է շիրիսա եւ ծնունդ առած է «Հէլեոս-
իւն», մակնութեան, Սարգիս պապն էր՝ Նոր-Զօս-
ղայեցի Զօրաբար շիրիսեանց, վաճառական
նաւանի։ Հայրը ընկի Վալիաթայի, ինչպէս կը
գրէ Գ. Ս. Հայկազունի, կը կոչուէր՝ Միքայէլ
շիրիսեանց, որ նախապէս վաճառական, մեծ
անշուղղութիւններու հանդիպելով, յետոյ պա-
րապտ է իրաւագիտութեամբ եւ եղած է
փաստաբան Չիւքայի մէջ։ Միքայէլ շիրիսեանց
իւր նոր ասպարէզին մէջ բաւական լաւ անուն
է հանած, չունենալով սակայն կանոնաւոր
վկայական, որովհետեւ այն աստիճանէն Ան-
գղիական տերութիւնն այժմուս պէս խստապա-
հանք չէր գտնուէ, եւ ամէն մարդ աղաւա իւր
կամքին ուղած արուեստովն զբաղելու։ Միքայէլ
իրաւագիտական ասպարէզին մէջ երկար չա-
պրիր եւ կը վախճանի թողով իւր զաւակները
գրեթէ կարօտ վիճակի մէջ։

Միքայէլ երկրորդ որդին էր Սարգիս, որ
իւր նախնական կրթութիւնը կ'առնու Վալ-
իաթայի Հայոց Մարգասիրական ճեմարանին
մէջ։⁴ Մարգասիրական ճեմարանն այն ատեն
փայլուն վիճակ մ'ունէր, եւ առհմայն զաս-
տիարակութեամբ կը կրթէր հայ մանուկներու
ստուար խումբ մը։ Սարգիս իւր աշակերտու-
կիցներուն մէջ գրեթէ առաջինն հանդիսանա-
լով՝ կ'ըլլայ շրջանաւարտ։ Հաջիւ կը թողու
ճեմարանը, բուռն փափաք մը կը գգայ բժշկա-
կանութեամբ պարապելու, ուստի իբր 1841
կամ 1842 թուականին կ'արձանագրուի Վալ-
իաթայի Medical College, այսինքն բժշկական
Ուսումնարանը։

Հաս շանցած՝ պատանին Սարգիս հոս ալ
կը փայլէ հակապաշտ յառաջադիմութիւններով,
եւ այնչափ՝ որ տակաւին ուսանող, հեղինակ կը
հանդիսանայ Կնդաւաթ Մարիաթաւաթիւն կամ
Մեթիթաւաթիւն վերնագրով բժշկական գրու-
թիւններու։

Թաղիադեանց իւր Աշու-եղներուն⁵ մէջ
հրատարակած է շիրիսեանցի այս աշխատա-

¹ Կալիաթայի Եօրդաթեան ընկերութիւնը հաստա-
տուած է 1845 Յուլիի 17ին։ Դպաստակն էր՝ Կաստաթէ ք
եւ է կրթիւ, ազգային դպրականութեան զարգացմանն ք
Հնդկաստանը։

² Կալիաթայի Աշու-եղ թերթին հրատարակել տեսած
է 1845 Օգոստոսի 15ին, խմբագրութեամբ Մերովայի Դու-
թեան Թաղիադեանց։

³ Աշու-եղ Եօրդաթեան Կալիաթայի Հար. Ա. Թի. 4,
26, 1849 Յուլի 5, էջ 208։

⁴ Գ. Սինեքերիմը Հայկազունի կալիաթայէն կը գրէր
իւմ հերոսն. «Չիւքայի կալիաթայից մէկ ու մէկ քաւարդ ժամ
հետոս է երկաթուղիով, այս անգ մը ժամանակ լսաւ Հայեր

բնակութիւնէն հաստատած, ներկայ էլ դը չէ բնակում
Հայերից անդ, բոլորն անգլոփոխուել են Վալիաթայ։ Չիւքա
ուրն այժմ կանգուն Սարգ Եօլսէփեան անունով մը եկե-
ղցին, որս անց ասն օրերին մը քահանայ Կալիաթայից
գիւմա՛մ անդ Մ. Պատարդը է անում՝ եւ հանգիստ զե-
րեզաններն օրհուս՝ եւ յետ գալեն Կալիաթայ, (Դամակ
28 Յուլիստի 1895)։

⁵ Աշու-եղ Եօրդաթեան Կալիաթայի, Հար. Ա. 1849
Ապրիլ 5, էջ 164։

⁶ Յիւ Սինեքերիմը Կալիաթայի Հատար Ա. Թի. 4, 1845
Սեպտեմբեր 6, էջ 81—82, եւ Թի. 5, 1845 Սեպտեմբեր 12,
էջ 87—88։

սիրութիւնները, որոնց իբր Գառաջաբան գրած է հետեւեալը.

“Գաղմալէզ առաջեալ Օրագրի 284 իջումն այս գիւտիս վերայ երկարորէն գրուածայ. բայց ասոսն որ գրողը լայաւնելով որ նորա վերայ գիտնոց արարեալ վիճաբանութիւնն պարզի, եւ նիւթն լաւ հասկացուի տարաբաղալ հեղինակին, այսինքն կենդանական մագնիսութիւն գտնողին խաբեւայ, եւ իւր գիւտն շինուածոց եւ խաբեական բան մի է երեւացանում:

“Մեամեր Գերմանացի բժիշկ էր. որ 1778ին գնաց Փարէզ, եւ անտի 1815ին՝ դարձաւ ի Հայրենիս իւր եւ մեռաւ:

“Այրա գիւտն, որ իւր անուամբ Մեամերութիւն եւս կոչեցաւ՝ այս էր. թէ կենդանական մագնիսութիւնն մին հեղանիւթ է, որ ամէն սեղ եւ ամէն բանի մէջ կայ: Այսբան հարեւանցի տեղեկութիւն առլէս յետ ներկայ ազգային ի՞նչ պարծանոց գրեմ, որ կալկալու տեղութեան բժշկարանին մէջ երեւելի բժշկներ կրկին արծարծեցին այս գիւտն ստուգել յորոց մին Հայազգի Պարոն Սարգիս Մ. Շիրիստեանցն գոյով, խնդրանոց պարոն Կարապետի Աղաբեգեանց շնորհ արար հաղորդել հետագայ ճշգրիտ եւ յաջողակ փորձառութիւնն:¹”

Ո՞ր նոր գիւտն ի սկզբան խաբեւայութիւն, մինչեւ իսկ յիմարութիւն չէ համարուած. Մեամերականութիւնն արդի բժշկութեան մէջ մեծ գեր կը խաղայ, եւ Մեամեր կը համարուի այսօր բժշկական յառաջդիմութեանց մեծ հեղինակներէն, որուն յիշատակը գեղեցիկ կենսագրականով մը կը կենդանացնենք վերջերս գիտնականն Ա. Մասսո, Փարիզու. Revue scientifique Հանդէսին մէջ:²

Մեամերականութիւնը (Mesmerisme) համանշանակ է hypnotismeի, անձնութեան՝ որուն միջոցաւ կը բուժին այսօր շատ մը ջղային հիւանդութիւններ: Գաղափար մը առնելու համար անոր վրայ, հերիք է կարգաւ Շիրիստեանցի հրատարակած փորձառութիւններէն մէկ հատը, որ իւր կիսադարեան հետ թեմամբն ալ՝ զուրկ չէ արդի նորութիւններէ:

Ահա ասիկ այն՝ որ կը ցուցնէ մեզ նաեւ Շիրիստեանցի Հայերէն շարադրութիւնը.

“Մին Հնդու 30 տարեկան խախուտ տալիսընով եկաւ մեր հիւանդանոցն, լուսնոտու-

թեանն, որ քանի ամաց հետէ ունէր, բժշկութիւն գտանելոյ յուսով: Ողորմելի էր յոյժ սորա կացութիւն քանի որ աշխարհութիւնն, որ օրէն շոյս կամ հինգ անգամ՝ կապտահեր, եւ ամէն անգամին երկու կամ երեք ժամու շափ կտեսէր՝ հազիւ մին կամ երկու ժամ կը թողոյր խղճին վասն որոք միթիթարութեան կամ հանգըտեան համար: Կասն սովորական գեղ աալոյ եղանակն գործ գրութեացաւ, բայց անհա՛հ: Նորա հիւանդանոց գալոց չորս օրից յետ սկսաւ մեամերական ազդեցութիւնն համեմատ հետազոյ կարգիս: Ետն կշտու գէնից հիւանդին սեղանի վերայ՝ հիւանդանոցի վերաբոյժն սկսաւ իւր արարողութիւնն, նախ իւր ձեռաց մատուցն իրար հետ կցեց, եւ այսպէս կցած մին մատնաւ շափ հեռաւորութեամբ հիւանդի ծործորակից կամ քամակի կողմից բերաւ. գէպ ի ճակատն, եւ անտի գէպ յերեսն մինչեւ ի փորն, երեւեմ կունեի կամ թեւերի վերայ ամանելով: Այս կերպ մատուց ման ամեն շարունակեց երեք քառորդ ժամու, յորժամ սկսաւ հիւանդն ընդ նշան երեւեցուցանել, եւ սակաւ առ սակաւ գնաց եւ ի վերջացաւ մինչեւ մի եւ կէս ժամ բռնվանդակ, եւ արարողութիւնն իւր բոլոր ներգործութիւնն ունեցաւ: Ապա հիւանդն խոր քուն մտաւ, եւ կատարելապէս անդգայ: Չընդ պատի մեծ աղաղակքն եւ պէտպէս ձայներն՝ որ նորա լսելոյ համար են հանում, չէր իմանում: Հատ անգամ ականջի մօտ իւր իսկ անունը գուտլով կանչեցին, բայց պտտախառն չկայր: Մի մեծ գնտասեղ բերին, եւ նի հարեցին՝ նորա անձն զանապան տեղերով. ուրիշ ուրիշ մերձ մի մատնաշափ խոր, յորոց քանի կաթիլք արին եւս վիժեցան. բայց առանց հիւանդի որոք բան հասկանալն: Իրաւի ամէն փորձ փորձ գրին նորա անձին որոք մասին զգացողութիւնն հասկանալոյ համար, բայց ճաբ չեղեւ. թէպէտ արին ընթացքն բնականի պէս ղնել փոփոխութիւն չէր ստացել: Վասն որոց թիւլ ետուն նորան նոյն գրութեամբ կալ մինչեւ շարունակ չորս ժամ: Ետոյ որպէս մին խոր ընդ զարթեցաւ, բայց ինչ հարցմունք արարին գլխին եկածանոց մաւնին՝ աւելի պատասխան չէր կարողաման տալ: Բայց միայն թէ շատ լաւ քուն եղայ, որ քանի ամիս էր զուրկի: Չորս ժամ շատ առողջ անցոյց յետ իւր մեամերական ընդն, բայց աշխարհափութիւնն կրկին գարձաւ, այս մասին եւս փորձեցին, եւ վեց առաւ մէջ կատարելապէս առողջացաւ մարդն: Եւ զկին սորա առողջութեան իւր չեմ տեսնել. բայց մին բարեկամ, որ անց-

¹ 86-Ն Ազգային Կալեմայ Հատար Ա. Թիւ 4, 1845 Սեպտեմբր 6, էջ 21:

² Mesmer et les Origines de l'hypnotisme, par A. Mosso, dans la Revue Scientifique de Paris, tome 61 Deuxième Semestre; 4^e 9, 29 Août, 1896, էջ 257-264:

քին ականատեսն էր՝ ասաց ինձ թէ ներկայ նա չառ լաւ կեանք է վայելում»,¹

1846 թուին Մարտ ամսուն մէջ, Սարգիս Հիւրիստեանց փառաւոր քննութիւններով կ'աւարտէ իւր ուսանողութիւնը կալիթայի մէջ եւ կը վկայութի բժիշկ, զոր Մետրովք Թաղիադեանց իւր Ագիւստինեան միջոցաւ կ'աւանդէր գրելով:

«Հայաբուն ուրախութեամբ հրատարակեմք, զի Պարոն Սարգիս Մ. Հիւրիստեան ընկալաւ զվկայական կատարեալ գիտութեան Առուեստին բժշկութեան, զորոյ զմտաբանութիւն ակնաշարմար ոսկեպատմեմք աստանոր յուրախութիւն բոլոր Ազգիս մերոյ, եւ յորգոր օրինակին զհետ լինելոց բազմաց ի բանասէր պատանեաց»:

Եւ այս սողերէն անմիջապէս ետքը՝ կը թարգմանէր վկայականն՝ որ է.

«Միքնեքոյ ստորագրողք լիօրէն եւ զգուշութեամբ քննելով զՊարոն Սարգիս Հիւրիստեան կալիթայի յայտնեան Մարտի 1846, հաւատարմացանք, թէ անի նա զգուշ տեղեկութիւն Անգամահատութեան, բնաբանութեան, տարրալուծութեան, նիւթոց դեղոց, մանկաբարձութեան, բուսաբանութեան եւ բժշկականութեան. եւ է կատարելապէս հմուտ սկզբանց եւ փորձոց դեղոց եւ յօդահատութեանց, որք բաւական առնեն զնա հրապարակեալ գործով, կամ սկսանելոյ գանկախ կիրառութիւն: Ընկալեալ եմք նաեւ վաւերական վկայականս յապացոյց ջանասիրութեան եւ բարի վարուց նորա յընթացս նորա ի բժշկական համալսարանին Բանկալայ»:

«Չեւ. Ժեյն Եօլմէ Ժուրնալիստ Ագիւստինեան»:²

Այս վկայականն եւ Թաղիադեանցի վերոյգրեալ տողերը, զորս կ'արտասպէր նաեւ Զմիւռնիոյ Աբդուլա Մարգարէն թերթը,³ բաւական են կարծեմ հաստատելու, թէ ինչ ջանադիր աշխատութեամբ ուսում Հիւրիստեանց բժշկական գիտութիւնները, զորս աւարտելէն վերջը քիչ մը առնէ իւր ծննդավայրին մէջ ի գործ դնելով, իբր 1846ին Հոկտեմբերին, կը մտածէ գնալ Անգղիա, աւելի եւս կատարելագործուելու, զոր կ'իմանանք Ագիւստինեան հետեւեալ տղերէն.

«Լսի թէ բժիշկ Սարգիս Մ. Զ. Հիւրիստեանց հանգերձի ելանել աստի ի Լոնտոն, զի

եւ ի համալսարանէ բժշկաց տեղոյն ընկալցի զվկայական կամ դիպլոմա, որում կամի ազգն ցուցանել զնշան քաջալերութեան իւրոյ՝ պարուք եւ թնթերք: Բայց եթէ խնարհ խորհուրդ մեր ի միտ առցի, բարեւք եւս լինի զարդիս բաժանորդութեամբ զուս գրամոյց միայն օգնական լինել նմա, քան թէ այլով իւրի: Գանգի Անգղիա ցուցանել զպատիւ Ազգին առաւել արժէ՝ քան թէ աստ լոյճ անձին միայնոյ վայելել»:⁴

Բժիշկ Հիւրիստեանց կ'երեւի թէ անարեւելք էր, որ տեղի կու տար Թաղիադեանցի այս առաջադրութեան. անարեւելք էր նա այդ, քանզի ձրիապէս Անգղիա երթալ կարողանալու համար յանձն կ'առնու շողենաւի նաւաստինէրու բժիշկ ըլլալ, զոր կը յայտնէ Թաղիադեանց՝ երբ անոր մեկնումը կը զեկուցանէ՝ գրելով.

«Այ սակաւ զգալ պատուելի հասարակութիւն մեր զբաժանումն յիւրմէ Պարոն Սարգիս Մ. Զ. Հիւրիստեանց բժշկի եւ Մետրիքի. որ յետ լիակատար վկայական կամ դիպլոմայ գտաւ. նեղոյ ի բժշկարանէ տէրութեան որ աստ, եւ բազում վատասակա առնելոյ գրեթէ ի վերայ ամենայն անձանց մերազնեկոյ՝ յաղոյնելով Բարձրելոյն եւ Զարու Պարոն նաւով ի Լոնտոն իբրեւ բժիշկ նաւաստուր եւ ժպկացն նաւուցայ նովին՝ յԱրեւմտեան Հնդկիս. զի եւ ի համալսարանէ բժշկութեան տեղոյն ընկալցի զվկայական»:

«Սա այդ պատուական եւ պիտանի անգամ հասարակութեան մերոյ՝ ի մօտ եղեալ է այց ելանել մերազանց Զմիւռնի եւ Ս. Պոլսոյ քաղաքաց, ահի ունիմք՝ զի պատուելի մերազնեք սիրով եւ յարգութեամբ ընկալցին զնա՝ ըստ արժանի բազում եւ մեծամեծ բարեմասնութեանց նորա, որ ոչ միայն առաջնորդ եղեւ արուեստին բժշկութեան ի մերազնեայս կալիթայ՝ այլ եւ կարապետ միւս երկու հայ պատանեկաց յուսումն այն: Միք յամենայն սրտէ մաղթեմք նմա յաղոյնելութիւն ի Տեսառնէ, եւ դարձողումը ի հայրենիս»:⁵

Ուրեմն կալիթայ առաջին Հայ բժիշկն էր նա, որ բժշկական ասպարէզին մէջ առաջնորդ ըլլալով նաեւ երկու Հայ ուսանողներու,⁶ կը թողոր իւր ծննդավայրը ճիշդ այն պահուն երբ Տգթթ. Գովաթի Մարկոսեան մահանալ Թով

¹ Ագիւստինեան Զարու Գ. Թիւ 62, 1846 Հոկտեմ. 17, էջ 79:

² Ագիւստինեան Զարու Գ. Թիւ 67, 1846 Նոյեմբ. 21, էջ 119:

³ Կալիթայի բժիշկանք Առաջնորդին այն տառերի աւանդուց մէջ գտնուող Հայերն են՝ ըստ Թաղիադեանցի, Պարոն Միքայիլ Զարու Գ. Թիւ 99, 1847 Յուլիս. 2, էջ 210:

⁴ Ագիւստինեան Զարու Գ. Թիւ 4, 1845 Սեպտ. 6, էջ 32:

⁵ Ագիւստինեան Կալիթայ Զարու Գ. Թիւ 45, 1846 Յուլիս. 20, էջ 197:

⁶ Ագիւստինեան Զարու Գ. Թիւ 279, 1847 Փետր. 21:

սեփեանց իւր ուսումը կ'աւարտէր Լոնտոնի մէջ, 1846 Հոկտեմբեր 2ին¹։

Զգիտեմ թէ Շիրիսոնեանց Զմիւռնիա կամ Կ. Պոլիս այցելեց, Թաւրիադեանց բան մը չի գրեւր այս մասին, եւ միայն անոր Լոնտոն հասնելը կը ծանուցանէր սակայն։

Բարդում ուրախութեամբ եղեւ մեջ ընտնուել զՊարոն Սարգսէ Մ. Շիրիսոնեանց՝ յանձնեալ Մայիս 14 թուով, զի ողջ անարատ հասակ ի Լոնդոն մարաքաղաք Անգղիոյ՝ բնակութիւն կալաւ անդ, եւ մնայր առողջութեան Պարոն Գուգիկոյ վարդապետի բժշկականութեան՝ զի ի ձեռն նորա տնօրինեացէ զմեռտ իւր ի համալսարան բժշկութեան տեղւոյն, եւ կատարեւ լազորեանցէ զուսումն իւր յարուեստին։ Անն ունիմք ի մտոյ լսել վերտախ զառողջութենէ կենաց եւ իստաւազդիմութենէ ուսմանց նորա, եւ այնպէս երանել զփառելի հասարակութիւն մեր ի Հնդկիկ, առ որ մին գայ, եւ միւս գնայ խնդութեամբ աչ ի գիւտ գիտութեան եւ ազգային պարծանաց։²

Որչափ քաջալերական են Թաւրիադեանցի սա սրտատուղեւ եւ հայրենաշունչ վսեմ աղերքը, որք իրաւամբ կ'ըլլան արդիւնաւոր. զի Սարգիս Շիրիսոնեանց երկու տարի ուսանելէ ետեւ, 1848 Ապրիլին յաղող ընտնութիւն տալով, Լոնտոնի կամալարանէն ալ կը պատկի բժիշկի, ինչպէս կը զեկուցանէին Լոնդոն Թայմս եւ Հուլիոս Անգղիական թերթերը, որոնց գրածը Աղեւտէր նշնութեամբ կը թարգմանէր, որ եւ հետեւեալը։

«Ի մէջ այնց պարոնաց, որք անգամ գրեցան թագաւորական Համալսարանին բժշկութեան, տեսանի եւ անուռ Պ. Սարգսի Շիրիսոնեան կալկաթեցոյ։ Այս առաջին անգամն է, յորում հայ պատանի ոմն ոգիւրա գտանէ յեւրոպայ։ Եւ յուսամք զի Պ. Շիրիսոնայ գովութեան արժանի նահատակութիւնն անմասն ի վարձուց չիցէ մնացելոյ։ Հայք ի կալկաթա քաւականք են ի պահել զպաշտօնարար որ յազգէ իւրեանց, որ առաւել տեղեակ իցէ հանգամանաց ազգին քան զուսարս յեւրոպացեաց։»

Այս թարգմանեալ տողերը Ալիստիւրէն կ'արտասուէին նաեւ Կ. Պոլսոյ հայաստան թեր-

թը եւ Զմիւռնիոյ Արշլւոյ՝ Աբբոյութեանը, որ իւր կողմէն ալ կը յաւելուր։

«Յիփոլմա ըստածը հրամանագիր կամ վկայական մըն է, որ կը տուի գիտնական ընկերութիւններէ ազատական արուեստի մը մէջ բաւական տեղեկութիւն ունեցող անձի մը, որ օրինաւոր կերպիւ սորված է նոյն արհեստը։ Եւրոպայի մէջ այսպիսի վկայականներ ընդունող հայագգի երիտասարդներ պակաս չեն ժամանակէ մը ի վեր, որոնցմէ արդէն քանի մը հոգի մէջ եւս կը ճանաչեմք։ Ուստի անտարակոյս Լոնդոն Թայմս լրագիրը շատ կը սխալէ ըսելով թէ, «Այս առաջին անգամն է, յորում հայ պատանի ոմն տիփլումա գտանէ յեւրոպայ։»³

Արշլւոյ՝ Աբբոյութեան գիտողութիւնն որչափ արդար եւ ստոյգ. Եւրոպայի մէջ վկայեալ հայ բժիշկները շատ ժամանակներ յառաջ ունեցած ենք մենք, հերիք եւ աչքէ անգամ մը անցընել այն բժշկական կենսագրութիւնները, զորս հրատարակած են արգէն։

Լոնտոն քաղաքին մէջ իւր ուսումը կատարեւրագործելով, Տարգիս Մ. Շիրիսոնեանց կը մնայ դեռ քանի մը ամիս, վերադառնալով իր հայրենի ներկուռ եւ քաջ ճարտարութեամբ հմտանալու. յետոյ հոն ամուսնանալով Անգղիացի երեցի մը շնորհալի դստեր հետ, իւր 1849 թ. սկիզբները, իւր նորապսակ կենսական ուղեկցութեամբ կը դառնայ հայրենիքը կալկաթա, ուր հրապարակաւ կ'ողջունելու պարծեալ Թաւրիադեանցէն, բայց այս անգամ Ալիստիւր Աբբոյութեան թերթին մէջ⁴։

Ահա ինչ որ կը կարգանք.

«Բարդում ուրախութեամբ հրատարակեմք զի արդեանք եւ ողջ անարատ դարձ Պարոն Սարգսի Շիրիսոնեան բժիշկի, հանդերձ ամուսնովն Անգղիացւոյ՝ ի Լոնտոնայ ի կալկաթա, յաւուր քառերորդում ամսոյն Յունվարի։

«Անն ունիմք, զի պատուելի Հասարակութիւն մեր աստ՝ ազգութիւն եւ արուեստ քաշալերելու մտք գոնեայ ընկալցին զնա ի ինամն գիտութեան իւրեանց. եւ փոխանակ օտարաւոր ձեռք ընդունելոյ զնորոհս բժշկութեան առ Աստուծոյ, սովոր ձեռք, դեղք եւ բարբառովք արաւցեն զայն։»

¹ Ալիստիւր Կալկաթայ, Հար. Գ. Թիւ. 85, 1847 Մարտի 27, էջ 102. եւ Հոգիւրի Արշլւոյ 1895 թիւ Թուրքի, էջ 168.

² Ալիստիւր Կալկաթայ, Հար. Գ. Թիւ. 102, 1847 Թուլիս, էջ 233.

³ Ալիստիւր Կալկաթայ, Հար. Ե. Թիւ. 138, 1848 Մայիս 13, էջ 106.

⁴ Հայաստանի թերթ Զամանանի, Կ. Պոլսոյ 1848 Յուլիս 31, Գ. Թարգ, Թիւ. 8—110.

¹ Արշլւոյ՝ Աբբոյութեան Զմիւռնիոյ Է. Թարգ, Թիւ. 317, 28 Յունվար 1848.

² 1848 Յունիս 23ին Թաւրիադեանցի Ալիստիւրը կը հաղորդէ, բայց նոյն տարին Ապրիլի 16ին Վերսալն կը հրատարակէր Ալիստիւր Աբբոյութեան անուամբ. ի Ալիստիւր Աբբոյութեան կալկաթայ, Հար. Ա. Թիւ. 15, 1849 Փետրուար 5, էջ 115.

Նորիննայ բժշկի մը համար ինչ լաւ պաշտպանութիւն մըն է այս գրութեանը, որ շուտով կ'ունենայ իւր ազդեցութիւնը, եւ Տաթև. Շիրիսոսեանց մէջ երկու ամիս վերջը, իսկական իշխան չլայ հասարակութեան հաւանութեամբը կ'ընտրուի բժիշկ տեղւոյն Մարգարտիական ձեմարանին, ուր ինքն աշակերտած էր իւր մանկութեանը:

Կարենոր կը համարիմ յիշատակել հոս, այս առթիւ ձեմարանի Հոգաբարձութեան 1849 Մարտ 10ի գումարման մէջ տուած որոշումը, որ է.

«Պարոն Ա. Յ. Աբգարեան առաջգրեաց եւ Յովսէփ Աշարեգեան երկրորդեաց, եւ ընդունելի եղեւ ժողովոյն, զի մեքանայ բժիշկ Պարոն Սարգիս Մ. Շիրիսոսեան կարգեցի եւ հաստատեցի իրրեւ բժիշկ ձեմարանին ի տեղի Պարոն Պիեքսենին, որում եւ ծանուցեն» զի որովհետեւ Պարոն Սարգիս Մ. Շիրիսոսեան էր մի յաշակերտաց ձեմարանիս, եւ է մի յազգէս Հայոց՝ վասն որոյ ազգային հոգով ժողովս զտեղի ինչ գանգատի զՊարոն Պիեքսենին, զորմէ գոհ են Անգամբ եւ կառավարիչք ձեմարանին»:

Գովելի ազգասիրութիւն, օրինակելի ընթացք, որ տակայն նախկին բժիշկ Պիեքսենին նախանձը կը գրգռէ եւ տեղի կու տայ անոր բխուլ եւ կոշտ վարմունքին, որու մասին թաղիականց ալ կը գրէ հրապարակաւ սա սողերն հիանալի.

«Ի 21 թիւով մերում յիշատակեցաք թէ ժողով անդամաց կառավարութեան Մարգարտական ձեմարանին ազգային ոգւով ընտրեաց զՊարոն Սարգիս Շիրիսոսեան ի տեղի Պ. Պիեքսենին, առ որ իբրեւ գրեաց զգիտաւնն, փոխանակ պատասխանելոյ նորա, «թէ արգարեւ մեծ ուրախութիւն է ինձ տեսնել զայսպիսի ազգային եռանդն ի ձեռք, եւ ես ոչ միայն զուարճանամ ընդ ընտրութիւն Պարոն Շիրիսոսեանին, այլ եւ պատիւ անձին գիտացից մատուցանել նմա եւ Հաստատութեան ձերոյ զօգնականութիւն իմ ի դիպել հարկին», գրեաց թէ՛ ընդ այլոց գեղձակ լուսանացն «կատարութիւն ձեմարանին էր ի ձեռս այնպիսի անձանց» որք ինչ ազգային ոգի ինչ, ոչ գիտէին, իւրաքանչիւր մի ի սոցանէ գարձ առնել խորհէր նամակի նորա, անշուղջ ցնա պարզաբար թէ՛ «որ ազգ

չունի, զիարգ կարիցէ դատաստան առնել ի վերայ ազգային զգացմանց»¹,

Բայց Շիրիսոսեանց կը շարունակէ իւր պաշտօնը, եւ այնպիսի ճարտարութեամբ, որ ամբողջ իշխանութիւն չայնարան մէջ շուտով մեծ համբաւ ստանալէն զատ, քիչ ատենէն ալ կ'անուանուի նաեւ բժիշկ իշխանութիւն չլայոց Սուրբ Սանդուխտ Գորոյնի եւ Ս. Նազարէթ եկեղեցւոյն, որոյ առթիւ կը գրէր թաղիականց.

«Զուարճանաբար արգարեւ, տեսնելով զի պատուելի հասարակութիւն մեր ի իշխանութեան՝ ճաշակել սկսանի զպատու ազգային յառաջագիտութեան, ճաշակել սկսանի ասեմք, եւ զմայլի քաղցրութեամբն: Արդէն իսկ հրատարակեալ է մեր, թէ զիարգ Մարգարտական ձեմարան, իրրեւ զմայր խանդակաթմ գիրիս երաց դարձի որդւոյն սիրելոյ բժիշկ Մարգար Շիրիսոսեանց, եւ զՊիեքսենի պատասխանեալ՝ պահեաց զնա առողջութեան զաւակացն ինամատար. — զնոյն արար եւ Սուրբ Սանդուխտ Գորոյ. — Բայց որ մեծ քան զանկեան, Նազարէթայ սուրբ Եկեղեցի մեր ի իշխանութեան՝ յատուի ինդգամեց հասարակութեան Ազգիս, եւ հաճութեամբ արտազան վիճակաւորացն՝ յառաջագրեալ է ընտրել զնա ի մատակարարութիւն դեղոյ մատակարարացն Բանին Աստուծոյ: Հաղիւ մինչ ցարդ տեսեալ էաք զՍոյ դք ի իշխանութեան՝ այսքան սիրով եւ բարեմտութեամբ ընտրեալ ի պաշտօն գէթ երկուց հասարակաց հաստատութեանց միանգամայն, իսկ սա ոչ միայն երեցունց միահաղոյն, այլ եւ գրեթէ միոյ միոյ առանձին գերդաստանի ազգիս մերոյ, որ ցուցանէ նախ՝ զմեծ կատարելութիւն նորա յարաւան վառուն պատանեկութեանն, եւ ապա սեր եւ ինձմ ազգիս առ ազգային յառաջագիտութիւն: Աշաշեմք ուշով ի միա առնուցու լրութիւն չափահասից, թէ այս ազգ Հայոց է, որ պատուեացն եւ պատուէ զձմարտիս ուսումն անգամոց իւրոց յամենայն դէպս, եւ չունի դք իրաւունս տրտուլելոյն զնմանէ»²,

Այս ոգեւորիչ խօսքերը շարագրելով հանդերձ, Աշխոթե Աբդուր-Հոսէփ անմիան գրիչը կ'առաջարկէր նաեւ Ազգային Դեղատան մըն ալ բանալ իշխանութիւն մէջ, աղքատ հիւանդներու ձրի գեղ բաշխելու, միանգամայն ձրի բժիշկ առաքելու. եւ կը յիշատակէր մեծանուն բարեգործ մը, Եւթիմիոս Մեղիսեան Մանուկեան՝ որ 1833

¹ Աշխոթե Աբդուր-Հոսէփ իշխանութեան, Հար. Ա. 1849, Թիւ 21, Ապրիլ 5, էջ 164:

² Աշխոթե Աբդուր-Հոսէփ իշխանութեան, Հար. Ա. Թիւ 25, 1849 Մայիս 16, էջ 194-195:

Աղքատ ու խեղճ հիւանդները մտածել, ամէն մարդու՝ բայց մանաւանդ ամէն բժշկի, առաջին եւ գլխաւոր պարտականութիւնն է՝ Առանց աղքատ հիւանդներու, բժիշկ եւ բժշկական թնա երբեք չեն յարողեր, ինչպէս բացարձակ եմ ես զայս 1893ին, Ալեքսէր Զեմարեանի անուն աշխատասիրութեամբս¹։

Այս աղքատախնամ ձեռնարկներն շնորհակալութեամբ մտածողներու պատմութեան մէջ նշանաւոր թուական մը կը յորդեն, յիշատակելի տարի մը, որուն սերտիւ կցուած են Թաւրիսի տարիքի անունները։ Առաջին իւր սրտառու եւ ազգու քարոզութիւններով երկրորդ իւր բժշկական անձանքի եւ եռանդուն գործունէութեամբն։ Բայց եղևի, հազար եղևի, որ խիստ կարճատեւ կ'ըլլան անոնք եւ կ'անհետան շուտ, ասուպի մը պէս։

Այն տարւան Յունիսին, Մերոյի Թաւրիսի, շնորհակալութեամբ ստիպել, ծանրապէս հիւանդանալով կը լուէ. աղքատին ցաւերուն ձայնը գլխի տակ տեսնուած մտ ճնշեցնող քնարը կը գաղարի ժամանակ մը, եւ երբ իւր սիրական պարսն Սարգիս բժիշկին՝ ճարտար ինձնութեամբ կ'առողջանայ, եւ կը սկսի գարձեալ իւր քաղցրեղանի գալլալիկները, եւ ահա Շիրիսուսի անունը կը մարի։

Խեղճ աղքատ հիւանդներ... կը զրկուին անոնք հոգածու եւ բարեգութ ինձնութեան, կ'որբանան յանկարծ, վասն զի Տրեթ. Շիրիսուսի անունը կ'առողջանայ, եւ կը սկսի գարձեալ իւր քաղցրեղանի գալլալիկները, եւ ահա Շիրիսուսի անունը կը մարի։

Եւ Բնէ գառն կերպով կ'որոյն Թաւրիսի անունը այս պատահարը... կարգանք.

«Գանցեալ կիրակիի լուսաբոյն Սարգիս Շիրիսուսեանը անկ ցեղ, թէ հանգրծեալ իցէ մտանք ի պաշտօն տերութեան, եւ ելանք ի փանջաբն։ Ըստ լուսաբոյն Սարգիսի մեջ նմա զի եւ զայնով կատարած խորհրդոյն, սակայն եւ այնպէս, չէր որ այնքան տրամեցաւ ընդ բոլորն աղետալից՝ քան զմեզ, որպէս յերես առ երես ի տեղուն ասացաք նմա։ Եւ եթէ տրամեցնէք մեք, եթէ յօգուոց հանդիմանք, եթէ ցաւիցնէք եւս, պարտական եմք, այդ պարտական ցիւանս իսկ՝ անձար պարտական, զի նա էր՝ որ սպա-

սաւորեաց մեծ եւ աստուածային սքանչելեացն՝ որով յետ իննորեայ բովանդակ մտնելութեանցս ի կեանս վերականցեցաք։ Եւ եթէ չկարացաք մինչ ցայսօր զարժանիս անգին երբեքեանց հատուցանել, պակասութիւնն մեր ինքեան չէ, որպէս ամենայն որ քաջ գիտէ։ Բայց եւ զու Ազգ, ճշմարտապէս խոստովանելով, եթէ իրաւ կարող լիցնես ստուգանել ի ծոցի քում զզրդի ուսեալ եւ զկատարեալ քո. — մեք իսկ լուսաբ, եւ բազումք արդէն վկայեն թէ լուսալիցն ի բժիշկ Ստուարդայ՝ եւ յայլոց, թէ բժիշկ Սարգիս Շիրիսուսեան այնչափ է, որչափ եւ ինքն։ Ուրեմն ընդէր պիտի օտարասիրութեամբ զայլն ընդունել եւ զմերն արհամարհել։ Եւստ է, զի ոչ զարհեստ ուսաք երբեք, եւ ոչ զարգ նորա ճանաչեմք։»²

Այն ատենները Սինկափոր կողմն կը հրատարակուէր Ռուսաստանէր անունով հայերէն թերթ մը վիճագիր. այս թերթն իւր ԳԻ Թուին մէջ արուեստից եւ գիտութեանց օգտակարութեանը վրայ խօսելով, Սարգիս բժիշկ Շիրիսուսեանց համար կը նուիրէր քանի մը տող, զորս քաղցրեղանի իւր Ալեքսէրին մէջ կ'առաւարկէր գրելով.

«Սիրելի պաշտօնակից Ռուսաստանէն Սինկափորայ՝ ի թիւ Գերորգ՝ խօսելով զպիտանութեան արուեստից առհասարակ՝ օրինակ առնու. զսոյն ինքն բժիշկ Սարգիս, յասենք.

«Թաւրիսի պարոն (Սարգիս) որպէս եւ դուք քաղածեմք, ամենայն ջանք ուսեալ զբժշկականութեան արհեստն, չկասկածեմք զի յամենայնի հմուտ իցէ արուեստին, եւ անկալէ բարեսրտութեան ազգին։ Եթէ պատուելի համազգիք մեր ի կարգեալ անխոր ունիցին զնա իրերս բժիշկ գերգաստանաց իւրեանց, որքան միութարակութիւն ունի նմանել անտի, որքան քաղցրութեան լինիցին նա օրինակ։ Քանի՜ արհեստասէրք տեսեալ զպառաջագիտութիւնն՝ եւ նախանձեալ բարեբաստիկ ելիցն, վառիցին ի փոյթ հետեւելոյ շաւղաց նորին։ Այլ ընդ հակառակն՝ եթէ արհամարհեալ զնա պատճառանք ինչ՝ ոչ ստատարանց զարհեստն, յայնժամ ո՛վ որ է լինելոց ձեռնառու նմա. զվարդ հնար լիցի նմա եւս բարձրագոյն աստիճանի արժանանալ. զինքդ այլք քաղալիս գտցեն։»³

¹ Ալեքսէր Զեմարեանի Տրեթ. Սարգիսի Գ. Թարգմանութիւն, Գեղարքայի տպարան, Գեղարքայի Գ. Թարգման, Զատար Բ., էջ 14-17։

² Ալեքսէր Սարգիսի կալիքայ, Զատար Բ., 1899 Գ. Թիւ 26, էջ 202։

³ Կալիքայի անունի բժիշկներն մին։

⁴ Ալեքսէր Սարգիսի կալիքայ, Զատար Բ., Թիւ 29, 1899 Գ. Թիւ 20, էջ 308։

⁵ Ալեքսէր Սարգիսի կալիքայ, Զատար Բ., Թիւ 29, 1899 Գ. Թիւ 20, էջ 308։

Սինկափորի Ռոստոմաւելիքն՝ Տրատարական օղն Տատուածը իւր թերթին մէջ զետեղելէն վերջը, Թաղիադեանց կը յաւելուէր զարձակաւ:

Երկու Տրատարական թերթի, կարծեմք թէ՛ բաւական իցեն Տամաձայն Սուրբ Գրոց Տատուածել ի միտս անկիրթն մեր՝ զպատիւ բժշկին եւ Տամազգոյն, իսկ թէ ոչ՝ ահաւանիկ նա երթայ եւ Ծառայէ տէրութեան, լաւ եւս կենցեղ եւ փառք քան զոր՝ Ազգ, կարող իցեալ տալը երբեք. այլ վայ մեզ, եւ Տաղար վայ, որ տարատարութեամբ յայս փնձակ Տատուածք եւ ազգատեցութեամբ ի դժոխս եմք կորնելոց, Զորոց զդուժ պահեսցուք կեղծաւորելով, եթէ պսիցեմք, թէ շատ լաւ, բժիշկ Սարգիս դեռ պատանեակ է Տատակաւ, եւ բժիշկ սա՛ դա՛ եւ նա՛ աւելի եւս Տմուտք. զգա, զգա եւ զնա աւելի արժան իցէ պահել քան թէ զբոյգ քեզ, Նախ՝ զի որք զվկայական շնորհեցին յԱնդրիս՝ ոչ յիմար օմանք էին, եւ ոչ իսկ կեղծաւորք Աշոցից Հայոց, Երկրորդ՝ Երանի թէ ասնդ կէսն Տատականայցէ տարաց առաւել քան թէ ազգիդ եւ ընտանեցի:

Տգիտութիւն թիւ իւր ինքեան պահեսցէ զշնորհս իւր: Բժիշկ Սարգիս Հիւրստեան ապրի Աստուծով՝ ուր ուրեք եւ իցէ, լաւագոյն քան զոր Ազգն կարիցէ պահպանել զնա՝ Տաղարումէկ թոնթորանց, եւ վայ եւս Տիրոց ազգիս՝ որ զըկիմք յազգասէր փութոյ նորա, եւ ի զգայք եւ զցերեկ անտուն եւ անքուն Տագնաւթեանց:

Պարբ. Մանգուտ Գրոց՝ զՍարգիս Հիւրստի անեցեղ զյիշատակ երախտեաց դարուց ի դար, եւ աղօթիք արեւն առ Աստուած առատասցի ի բարձունս Տոգուով եւ Տաւատով պաղատել ի փոխարէն երախտեաց՝ զշնորհս Տոգեւոր եւ մարմնաւոր օրհնութեանց՝:

Թաղիադեանցի գրէն յոգնած սա խօսքերը, որպիսի պատուաբեր եւ Հիւրստեանցի բժշկական կարողութեան եւ Տամաւաւն, բայց եւ զնշարի անպատուաբեր մեր տոհմային անգոյն բնաւորութեան: Մեր բնածին սովորութիւնը է՛ միթէ՛՝ ովա՞նքներ նախ կարգաւ, եւ շուտով ալ ի իւր հոռ գոռել, միթէ՛ գեռ այսոր է՛նք տեսնուի Տայաքնակ տեղեր՝ ուր հայ բժիշկներ, ուսեալ եւ կարող, իրենց ամեն անձնաւորութեամբն եւ ճարտարութեամբը բնաւ

երբեք չեն քաջալերուիր, մինչ տարբ բժիշկներ՝ բժիշկ անունը կրելու իսկ անարժան, իրենց կերպակերպ կեղծաւորութիւններովն եւ յայտնի շաղկապիութիւններովն աւելի եւս կը յարգուին եւ կը քաջալերուին: Այս, Հայուն բնական է այս, նա կը սիրէ աւելի տարին Ծառը ընել, քան թէ իւրը. բայց Ծառը Ծառը չէ՛նք, Ծառը զԾառեղեմ հո՛ւ չէ՛նք, Ծառը Ծառը չէ՛նք:

Կալկաթայի Հայերն տարասիրութեամբ չեն կարողանար պէտք եղած օգնութեան ձեռքը կարկառել Հիւրստեանցի, որ տարի մը միայն մնալով կը ստիպի Տեառնալ իւր ծննդավայրէն եւ երթալ այլուր իւր բախտն որոնել:

Մեր մեկնիլը մեծ ցաւ էր պատճառե՛ բաց ի Թաղիադեանցէն, նաեւ կարգ մը Նաւաւոր անձերու, որոնց Տեա նա շատ անգամ մանակից եղած էր Կալկաթայի ազգային գործերուն: Այս անձերն էին Թաղեոս Աւետուանց, Մանուկ Զօրաբեան, Գալստեանեան, Ուրանեանեք եւ այլն, զորս յիշատակեցի վերեւ:

1850 թուականին սկիզբներն է, որ Տոգիւ Սարգիս Հիւրստեանց, իւր զինուորական բժիշկ կ'ընդունուի Տերութեան բանակներուն մէջ, եւ կ'երթայ Փնշքը, զոր Անդրիայիք՝ 1845ին յաղթական պատերազմով իրենց իշխանութեանը սակ առած էին:

Երկար տարինը կը Ծառայէ նա Անգլո-Հնդկական բանակներուն, եւ կ'ունենայ կարեւոր պաշտօններ, բժշկական եւ վերարտաժական պն-պիսի լաւ գործաւորութիւններու հեղինակ Տեառնաւորով, որ Անգլիական Կառավարութեան բարձր գնահատմանց արժանի կ'ըլլայ շուտով, ինչպէս կը գրէր ինձ Պ. Մ. Հայկազունի:

Յաւաղ է, որ Հիւրստեանցի Կալկաթայէն մեկնելէն ի՛նչ ատեն վերջը, կը դադարի ի սպաս Թաղիադեանցի Ալեքսեօրէ՛ն. անշուշտ պիտի կ'արդայիք Տեա Հիւրստեանցի բժշկական կենսեքի պատմութեան միւս էջերն ալ, որոնցմէ կը զբերուի մասոր:

Հիւրստեանց իւր զինուորական բազմազգաւ է Ծանր պաշտօնավարութեանց պահուն, բնաւ ժամանակ չէ ունեցած ազգային գործերով զբաղելու. նախ՝ վասն զի միշտ հեռի էր Տայաքնակ քաղաքներէ. երկրորդ՝ որ նա երբեք մնայուն չէ եղած որդեալ տեղ մը, այլ շարուն-

1 Սինկափորի Ռոստոմաւելիքն սկսած է Տրատարական 1849 Յուլիս 1ին, եւ դադարեց 1853 Մայիս 27ին:

2 Կալկաթայի Սարգիս Ստեփանի Գրոցը Թաղիադեանցը բացած էր 1846 Փետրուարին:

3 Ալեքսեօր Մարտիկոս Կալկաթայ, Հար. Բ., Թիւ 30, 1849 Դեկտ. 30, էջ 308:

4 Ալեքսեօր Կալկաթայ, Հար. Բ., Թիւ 29, 1846 Յունուար 26, էջ 27, եւ Ալեքսեօր Մարտիկոս, Հար. Բ., Թիւ 32, 1849 Սեպտ. 13, էջ 239:

5 Թաղիադեանցի թերթը վերջապահապէս դադարեց է՝ 1852 Յուլիս 15ին:

նակ աստանդական: Զայս կ'աւանդէ մեզ, զար-
ձեւալ թաղիագեանց, որ իւր կենաց վերջնութե-
ր տարին¹, 1857 Մայիս 27ին գրած մէկ յըսն-
ւելի նամակին մէջ կ'ըսէր.

“Եկին երկու Անգլիացի պարոնայք, եւ
հրաւիրեցին զիս երթալ ի Վաշաու (անդ՝ ուր
մեր բարեկամ Պարոն Սարգիս Շիրիսուն
բժիշկն), եւ վերակալու լինել երկուց գարդոցաց
տեղւոյն, խոտասնալով տալ ինձ ամսոյ 120 ուս-
փիս: Պատասխանեցի. “Այսօր ի՞նչ կիրակի է,
յետ մտածելոյս գրով յայտնեցից”, եւ սկսայ
վերածել եւ վերանել, բայց ըստ որում տեղն
չայ չկայ, եւ մեր Պարոն Շիրիսուն տեղն կարն
անհաստատ է, մանաւանդ զի իօրհնեցայ թէ ար-
դէն իսկ 55 ամբ են յորմէ հետէ կամ, եւ ոչ
ուժք ծառայեցի, եթէ ոչ Ազգին, եւ այսու-
հետեւ ո՛ր գիտէ, որքան պիտի ապրիմ. թողու
զպզեն եւ ծառայել օտարաց՝ կամ կորուսանել
ընդարան ամաց աշխատութիւն վասն պորտոյ
միայն, օտարոտի թուեցան ներքին կրից եւ փա-
փաքանցս. վասն որոյ վերջին պատասխանի ետու
նոցա թէ ես արդէն իսկ խօսեցեալ էի տուն այ-
լում².”

Ուրեմն 1857ին Շիրիսունեանցի պաշտո-
նավայրէ եր Վաշաու, ուր նա մինչ 1860 փառացած
է կարծեմ, եւ 1860էն 1864 աւտիթ ունե-
ցած է գանուիլ կալիֆաթ:

1860ին թէոգոսիոյ մէջ հրատարակուած
Մոսկու Վաշաւին, կալիֆայի չայ գաղթակա-
կանութեան վրայ գրած ընդարձակ յօդուածի
մը մէջ, այն ատենի երեւելիներուն հետ կը յիշէ
զՇիրիսունեանց, զայն անուանելով “բժիշկ բազ-
մահմուտ”³:

1863 Սեպտեմբեր 23ին կալիֆայի
չայեան կողմանէ առ Մատթէոս Առնուդիկուն
Եւթիմանի ուղղեալ Հանրագրութեան մը ներքեւ
կը կարգանք նսեւ. “Սարգիս Մ. Շիրիսոս բժիշկ
ստորագրութիւնը”⁴. եւ 1864 Դեկտեմբերի 26ին
կալիֆայի մէջ տեղի ունեցած Ազգային ընդ-
հանրական ժողովին մասնակցողներուն մէջ ալ
կը տեսնենք անոր գործակցութիւնը, զոր զեկու-
ցած է Զմիւռնիոյ Արշուլոյ Արքեպիսկոպոսը⁵:

Այս թուականներուն է արդեօք, որ Շիր-
իսունեանց՝ իւր վերաբուժական գործողութիւն-
ներով անուանի կ'ըլլայ, եւ կալիֆա հիւր
եղող գաղղիացի ճանապարհորդ բժշկի մը զար-
մանք կը պատճառէ, որու մասին՝ Պ. Ս. Հայկա-
զունի 1895 Մարտ 31ին կը գրէր ինձ, թէ՝

“Կալիֆաթում” նորա գաղթականներն նորա
վերաբերմամբ շատ գովասանութիւն են ինձ
կարդում, ասում են, որ ամենարեւոյր “ընթեր-
ց” (վերահաս) է եղել եւ մեծ արմանք ու զարմանք
պատճառել այդ ճիւղի մէջ մի ֆրանսացի ճա-
նապարհորդ բժիշկի, որը կալիֆայում ներկայ
լինելով նորա գործառնութեան, չափազանց գոհ
է եղել եւ հիացմամբ իւր ճանապարհորդութեան
գրքին մէջ յիշած այս մասին.”

Ո՞ր “գաղղիացի բժիշկն” էր այս, չ'ըսեք
Պ. Ս. Հայկազունի. եւ կը յարէ.

“Պատմում են նոյնպէս, որ իւր ներկայու-
թեամբ հիւանդներին սփոփելու է եղել իւր
բնական զուարճախօսութեամբ, եւ շատ հիւանդ-
ներ՝ երբ լսելու են եղել նորա գաղութը, գրե-
թէ մի կերպ մոռացած են եղել իւրեանց ցաւ-
երը շատ ուրախ ու զուարթ մի անձնաւորու-
թիւն է եղել.”

Անշուշտ յայտնի բժիշկ մ'ըլլալ պէտք
էր, վայելելու համար թաղիագեանցի նման ան-
զուգական գրչի որ համակրութիւնն, եւ նիւթ
ըլլալու համար անոր հրապարակական ջերմ
գովասանութիւններուն: Դառն է ինձ յիշել հոս,
թէ այս մեծ բժիշկը, այս հանրածանօթ Հայը,
բոլորովին մոռցուած է կալիֆայի Թարգեւի
գիտական Պ. Մեսրոպը Սեթեանէն, որ Հնդկա-
սոյ գաղթականութեան նախնի եւ նոր Պառ-
մութիւնն⁶ հրատարակելու վտեմ եւ գեղեցիկ
գաղափարն ունեցաւ հերոսն:

Տղքմ. Սարգիս Շիրիսունեանց իբր զինուո-
րական բժիշկ, շարունակաբար 35 տարի կը ծա-
ւայէ Անգլիական Ցերութեան, այսինքն 1850—
1885 կամ 86, որտեմն ալ յոգնած եւ պար-
տասեալ, կարօտ զգալով զինքն հանգստի, կու
տայ իւր հրաժարականը:

Ի՞նչ փայլուն գործառնութիւններով, եւ
ինչ մեծ պատիւներու արժանանալով արդեօք
բոլորեց նա՝ իւր երկարամեայ պաշտօնավարու-
թեան շրջանը. բաւ է յիշել այն վարձատրու-
թիւնը, զոր Անգլիական Ցերութիւնը ըրաւ իրեն
ազնուաբար, իւր հանգստի օրերուն համար

¹ Միտրոքի թաղիագեանց, ըստ ասանդութեան թա-
ղիագի Ա. Ետուսմանց, վախճանած է ի Շիրիս 1898 թուին
Յուլիս 10ին: 86ն Արշուլոյ Արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, թիւ
588, 1858 տարուայ:

² Կիսաբոյսովիւն Մեդուլայի թաղիագեանց, Ցեր
Եօյհաննէս գահայի Միրան, թիւքը 1868 էլ 31:

³ Մոսկու Վաշաւի թաղիագի Ս. Յարթ 1860, էջ 86:

⁴ Արշուլոյ Արքեպիսկոպոս Զմիւռնիոյ Ի. Գարի, թիւ
716, 28 Դեկտեմբեր 1863:

⁵ Արշուլոյ Արքեպիսկոպոս 25րդ Ցարի, 1885 Մարտ,
Արշուլ. Մայիս, Թուրքիա, թիւ 749, 750, 751, 752, 753,
754, 755, 756:

⁶ History of the Armenians in India, by
Mesrobian J. Seth, Calcutta 1895:

900 Անգղիական ոսկի տարեկան թուղակ մը
յատկացրենելով:

Իւր աշնու թեանց արդար հասուցումն ըն-
դունելով, Հիբիստեանց երկու տարիի չափ կը
մնայ Վալկաթա. յետոյ կը փոխադրուի Անգղիա,
ուր իւր սիրելի կենակցին հետ կը բնակի ցարդ
1888էն ի վեր:

Իւր հասցեն, զոր Գ. Ս. Հայկազունի յղած
է ինձ 1894ին, հետեւեալն է,

Dr. S. M. Shicare
Favilla, Spring Grove
Isleworth, Middlesex

England.

Յարգւոյ արուեստակցիս առաջին անգամ
պատիւ ունեցայ գրել 1894 Գեկտեմբեր
16/28ին. պատասխան չընդունած, գրեցի եր-
կորդ տեղամ 1895 Ապրիլ 15/27ին. որոնց
պատասխանն ընդունեցայ Մայիս 12ին եւ 13ին,
որով կը ծանուցանեի իւր սիրելի կողակցին ծանր
հիւանդութիւնն, եւ կը խոստանար հիւանդու-
թեան օրերն անցնելէն ետեւ ընդարձակ գրել:

Արշափ ազնուութիւն կը բուրեն այս նա-
մակին տողերը, եւ որչափ համապատկիւն, որ-
չափ պարզ են անոնք. պարզութիւնը մեծ մար-
դոց գլխաւոր յատկութիւններէն մին չէ՞ միթէ:
Տըթ. Հիբիստեանց ի զուր կը ձգնի խոնարհիլ
այն բարձրութիւնն, ուր իրաւամբ հասած է
ինքն, երկու տարիներու քրտնալոր աշխատու-
թեամբ. իւր խոնարհամբ ցգացումները զինքն
աւելի եւս կը մեծցընեն, եւ իմ յարգանքս առ
ինքն աւելի եւս կ'աճեցընեն. շնորհակալութիւն
ուրեմն այս պատուական նամակներուն համար,
որով հաճեցաւ նա պատուել զիս երկիցս:

Տըթ. Հիբիստեանց գծախտաբար չկա-
րողացաւ յետոյ կատարել իւր խոստումները,
պատճառն էր՝ դարձեալ Տիկին Հիբիստեանցի
հիւանդութիւնը, որ յանկարծ կրկնուելով, նոր
արտութեամբ կը համակեր իւր սիրազօգ ամուս-
ինը: Անշուշտ յարգւոյ բժշկին կարելի չէր բնա-
ռունեալ խաղաղ ժամեր, միաժամդ հանդարտ
միտք, գրիչ ձեռք առնելու եւ հարկ եղած տե-
ղեկութիւններն ինձ հաղորդելու:

Տըթ. Հիբիստեան այժմ գրիթ է եօթա-
նասնամայ, բոլորովին դադրած է բժշկական
գործունեութենէն:

Չունենալով իւր արդի պատկերը, կը ստի-
պուիմ ներկայացընել հոս, անոր մէկ հին լու-
սանկարը, որ կը ներկայացընէ զինք երիտասարդ
հասակի մէջ:

1868ին առնուած է այս լուսանկարն Սիւ-
լայի մէջ, ուր Հիբիստեանց կը պաշտօնավարէր
թերեւս այդ ժամանակ:

Եւ այս լուսանկարը բարեհաճած է շնոր-
հել ինձ, Վալկաթացի աշխու Հայուհի մը՝ Տիկին
Բայնան, որուն համար Գ. Ս. Հայկազունի կը
գրէր՝ թէ, «մի ծաղիկ է Հնդկահայ գաղմա-
կանութեան իգական սեռի շարքում» իւր աշխու
խոհեմ եւ աշխատասէր բնաորութեամբ:

Բիւր շնորհակալեց, այս յարգելի Տիկինոյ,
իւր մեծ նուէրին համար, առանց որոյ՝ շատ ան-
շուք պիտի մնար իմ այս փանաքի աշխատու-
թիւնս:

Ամբարկ մը այս համակերի գէմբին՝ բաւ-
ական է ըսելու թէ ինչ հանձնարի տէր մարդ է
Հիբիստեանց:

Տըթ. Հիբիստեանց զաւակ չէ ունեցած
բնաւ, բայց ունեցած է եղբայրներ, որոնցմէ մին
Գ. Խաչիկ Հիբիստեանց վաճառականը՝ կ'ապրի
Դեռ Վալկաթա:

Աւստի եւ առողջ կենեք, երկար տարիներ
մաղթելով ի սրտէ Հնդկահայ պատկառելի
բժշկին եւ իւր սիրայօգ ամուսնոյն, կը փա-
փաքիմ բախտ ունենալ նորէն ընդունելու իրմ
նամակներ, եւ կարողաւ սերուն գրեմն այն
մասնեան ուր զինած են երբեմն Թաղիադեանցի
հիւանդ բազուկը:

Թաղիադեանցի անունն Հայ Պատմութեան
մէջ պաշտօնի անուն մըն է. Հիբիստեանց ա-
նունը սերտիւ հիւստած անոր հետ, կրկնակի
յարգանք է որ նիւթ կ'ըլլայ այսօր մեր սկզբ
գրչին:

Տ. ՎԱՆԴԱՄ ԹՈՐԿՈՒՄԵՆՆ



Ս Ա Ց Ե Ն Ա Գ Ր Ա Վ Ա Ն

ԱՐԳՈՐՈՐ ԶՐԵՑՔ ԳՐԱԼԵՆ ԽՈՐԵՆՈՐԸՈՐ
ԳՐՈՒԹԵԱՆՈՐ ՄԷՃ

Գ.

Մ. Խորենացոյ Պատմութիւնը:

(Հրատարակուի եւ Գրէ):

Եւս վերջին երեք նամակներն՝ որոնց մէջ
Արգար «արեւոյ Հայոց» տիպոգրան աւետել կը
շարունակէ, «Արգարութիւն» մէջ չեն գրու
նուիր: Արչի նայուածքով կը տեսնենք անոնց